



## Ը. ՕՐ ՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ



### ԺԱՄԱՄՈՒՏ

Աստուածածին, քեզ հռչակելով՝ կ'երկրպագէ ուղղափառ Եկեղեցին, որովհետեւ այն, որու չէին համարձակեր նայիլ բազմաչեայ քերովբէները, հրանիւթ գահերն ու վեցթելեան սերովբէները, դուն՝ իբր աղախին արգանդիդ մէջ առանց սերմի կրեցիր Տէրը եւ իբր մարդ՝ ծնունդ տուիր բոլորիս Աստուծոյն, քեզմէ մարմին առած անըմբռնելի Բանին, որպէսզի աշխարհի փրկութիւն եւ մեզի կեանք պարգեւէ:

# ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ

## ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ԲՁ.

Անթառամ ծաղիկ, անդատապարտ շառաւիղ՝ վերաբուսած Յեսսէի արմատէն, Եսային կանխապէս Յոգիի եօթնարփեան շնորհքներուն ընդունարան կոչեց քեզ. Աստուածածին եւ Կոյս, Զեզ կը մեծարենք:

Քաղցրահամ պտուղի բանաւոր բարունակ, որմէ մեզի համար անսպառ ողկոյզ քաղուեցաւ որպէս ուրախութիւն՝ գիտութեան ծառէն ճաշակելու [հետեւանքով] տրտմածներուս համար: Անարատ սրբուհի, բոլորս Զեզ կը մեծարենք:

Ապրելով մարմնի մէջ Անարատ վարքով, այսօր առաքեալներով շրջապատուած աստուածային հրամանով եւ իշխանութեամբ Քու Որդիիդ եւ մեր Աստուծոյ արքայութիւնը փոխադրուեցար խոստովանողներուս որպէս բարեխօս, Զեզ կը մեծարենք:

### ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 71, 8 եւ 1-2)

Մինչեւ չքանալը՝ արդարութիւնը պիտի ծաղկի եւ կատարեալ խաղաղութիւն պիտի տիրէ:

Աստուած իմ, քու դատաւորական իշխանութիւնդ Թագաւորին փոխանցէ եւ քու արդար գործելակերպդ՝ գահաժառանգին:

## ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղղած Երկրորդ Թուղթն է ընթերցուածը.  
(2 Կոր. 6, 16 - 7, 1)

Աստուծոյ Տաճարը ի՞նչ նմանութիւն ունի կուռքերուն հետ: Մենք, որչ Աստուծոյ տաճարներն ենք, ինչպէս որ ըսաւ Աստուած. Պիտի բնակիմ անոնց հետ եւ պիտի քալեմ անոնց առջեւէն: Պիտի ըլլամ անոնց՝ Աստուած, իսկ անոնք պիտի ըլլան ինձի՝ ժողովուրդ: Ասոր համար Տերը կ'ըսէ. Ելէ՛ք անոնց մէջէն եւ մեկուսացէ՛ք: Մի՛ մօտենաք անմաքուր բաներու եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Պիտի ըլլամ ձեզի հայր եւ դուք պիտի ըլլաք ինձի տղայ եւ աղջիկ զաւակներ, կ'ըսէ Ամենակալ Տերը:

Քանի որ այսպիսի խոստումներ ունինք, սիրելիներ՛, մաքրուի՛նք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ եւ իրականացրենք մեր սրբութիւնը Աստուծոյ երկիւղով:



## **Ալեյուհա, Ալեյուհա,**

Ուրախացի՛ր, շնորհքներով լեցուն, Տերը քեզի հետ է. դուն օրհնուած ես բոլոր կիներուն մէջ եւ օրհնուած է քու արգանդիդ պտուղը:

**(Ղուկ. 1, 28 ք եւ 42)**

**Ալեյուհա:**

## **ԱԻԵՏԱՐԱՆ ԱԻԵՏՈՒՄ**

**(Ղուկ. 1. 26-38)**

- **Ամենակալ Հօր կողմէ.** Վեցերորդ ա-  
միսը, Գաբրիել հրեշտակը Աստուծոմէ  
դրկուեցաւ Գալիլիոյ Նազարեթ քաղաքը,  
կոյսի մը, որ նշանուած էր Դաւիթի տու-  
նէն Յովսէփ անունով մարդու մը հետ.  
կոյսին անունն էր Մարիամ: Հրեշտակը  
անոր տունը մտաւ եւ ըսաւ. «Ուրախա-  
ցի՛ր, շնորհքներով լեցուն, Տերը քեզի  
հետ է»: Այս խօսքերուն վրայ Մարիամ  
խռովեցաւ եւ կը մտածէր, թէ ինչ կը  
նշանակէր այս ողջոյնը: Հրեշտակն ըսաւ  
անոր. «Մի՛ վախնար, Մարիամ, որով-  
հետեւ Տիրոջ արջեւ շնորհք գտար: Պի-  
տի յղանաս եւ պիտի ծնանիս որդի մը եւ  
պիտի կոչես զինք Յիսուս:

Ան մեծ պիտի ըլլայ եւ պիտի կոչուի  
Որդի Բարձրրեալին: Տեր Աստուած պի-  
տի տայ անոր, իր հօր՝ Դաւիթի գահը եւ  
յաւիտեան պիտի թագաւորէ Յակոբի  
տան վրայ: Անոր թագաւորութիւնը վախ-  
ճան պիտի չունենայ»: Մարիամ ըսաւ  
հրեշտակին. «Ի՞նչպէս պիտի ըլլայ ինծի  
ասիկա, քանի որ ես կոյս եմ»: Հրեշտակը  
պատասխանեց. «Հոգին սուրբ պիտի  
գայ քու վրայ եւ Բարձրրեալին Չօրու-  
թիւնը քեզ պիտի հովանաւորէ. ասոր  
համար Ան, որ քեզմէ պիտի ծնի՝ սուրբ է  
եւ պիտի կոչուի Աստուծոյ Որդի: Ահաւ-



ասիկ քու ազգականդ, Եղիսաբեթն ալ  
յղացած է եւ վեցերորդ ամիսին մէջն է,  
ինք որ ամուլ կոչուած էր: Որովհետեւ  
Աստուծոյ համար անկարելի բան չկայ»: Մարիամ ըսաւ. «Ես Տիրոջ աղախինն եմ,  
թող ամէն բան ըլլայ ինծի քու խօսքիդ  
համաձայն»: Եւ հրեշտակը մեկնեցաւ  
քովէն:

## **ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ**

### **Ը. Օր Փոխման**

Ս. կոյսին Վերափոխման տօնը Հայ  
Եկեղեցին կը կատարէ ինը օր շարու-  
նակ: Այս Կիրակի կը գուգադիպի Աստ-

ուածածնայ վերափոխման ութերորդ  
օրուան: Ղուկասու Աւետարանի Աւետ-  
ման դրուագը, զոր կը կարդանք այսօր,

մեզի կը յիշեցնէ թէ փրկչագործութիւնը սկսաւ ճիշդ այդ պահուն, երբ Գաբրիէլ հրեշտակը աւետեց Մարիամի թէ Փրկչին մայրը պիտի ըլլար: Այս խորհուրդը, փրկչագործութեան մեծագոյն խորհուրդներէն մէկը ըլլալով, պատրաստուած էր ոչ միայն երկար դարերէ ի վեր, այլ արարչագործութեան սկիզբէն:

Արդարեւ Մատթէոս աւետարանչի ազգաբանութիւնը մինչեւ Աբրահամ կը տանի Քրիստոսի սերունդը, իսկ Ղուկասինը՝ զայն կը հասցնէ մինչեւ Ադամ: Ղուկաս եւ Մատթէոս, շէշտը կը դնեն մեսիական ընտանիքի պատկանելիութեան կարեւորութեան վրայ, փաստելու համար թէ Աստուած, դարերու ընթացքին, չէ մոռցած իր խոստումը որ տուաւ առաջին մարդուն ըսելով թէ՝ պիտի ուղարկէ Փրկիչ մը որ պիտի քաւէ մարդկային առաջին մեղքը, ինչպէս նաեւ բոլոր մարդոց մեղքերը:

Մարիամ անշուշտ նախ անակընկալի կու գայ այս աւետիսին առջեւ. Իր խոնարհութիւնը զինք կը մղէ ինքզինք անարժան զգալու այս մեծ պատուին. Ուստի կ'առարկէ թէ ինք կոյս է, եւ մարդ չի ճանչնար. Գաբրիէլ հրեշտակը կը փարատէ իր տարակոյսները եւ կը հաստատէ աստուածային կոչը: Մարիամ իրագեկ է այլեւս թէ որքան մեծ պատիւի կ'արժանանար Տիրոջ կողմէ՝ Փրկչին մայրը ըլլալու: Մեծ էր իր ուրախութիւնը, սակայն երբեք չի մոռնար թէ այս բոլորը շնորհք մըն է որ իրեն տրուած է: Այսպէս Տիրամայրը խոնարհաբար կը բացագանչէ. «Ես Տիրոջ աղախինն եմ». Ան պատրաստ է կատարելու Աստուծոյ կամքը, հակառակ որ արդէն մասամբ գիտակից է թէ որքան դժուար պիտի ըլլայ իրեն վստահուած այս առաքելութիւնը. Այլեւս կարելի չէ ապրիլ առաջուայ պէս, որով փոխուած է ամէն ինչ. Նոր պարտականութիւններ կը ստեղծուին այս մեծ պաշտօնի ընկալումով. Մարիամ



չի պատկանիր ինքիւրէն, այլ կը պատկանի Աստուծոյ: Այդ վարկեանէն Ամենասուրբ Կոյսին սրտին մէջ մարդկութեան հանդէպ անսպառնելի բոց մը վառուեցաւ մայրական անսահման սիրոյ, եւ հաւատացեալներուն մէջ ալ, որդիական անսահման գորովի ու վստահութեան ակ մը բխեցուցին Տիրամօր հանդէպ, որ դարերու ընթացքին երթալով դարձաւ յորդահոսան գետ, որ կ'ոռոզէ ծաղկաւետ դաշտերը հոգիներու եւ պտղաբեր անդաստանը Ս. Եկեղեցւոյ: Մենք եւս, Մարիամի հոգեւոր զաւակները, քաջալերուած իր այս վճռական պատասխանէն, ապաւինինք իրեն մեր ամբողջ սրտով ու հոգիով, մեր բոլոր ցաւերն ու մտահոգութիւնները իրեն յանձնելով: